ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 210-21

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «24» 06 2021թ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա.Խաչատրյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Սանի Լենդ» ՍՊԸ-ի (գրանցման համար 87.110.959274) ի դեմս տնօրեն ***Արման Նորիկի Մելոյանի*** (անձնագիր AN 0777593, տրվ. 26.12.2013թ., 050-ի կողմից), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա մյուս կողմից (այսուհետ՝ Շահառու), (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 369-Լ որոշմամբ հաստատված «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), և Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով՝ Շահառուն պարտավորվում է Ծրագրի շրջանակներում կառուցել սահմանված չափորոշիչներին համապատասխան անասնաշենք, իսկ Նախարարությունը պարտավորվում է կառուցված անասնաշենքի դիմաց տրամադրել Ծրագրով սահմանված փոխհատուցում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Նախարարությունն** իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Շահառուի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված աշխատանքները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.3. առանց իրականացված աշխատանքների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. շահառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված աշխատանքները չեն համապատասխանում ծրագրին,

2.1.4. պայմանագրի դրույթները խախտելու դեպքում Ծրագրի շրջանակներում տրամադրված փոխհատուցման գումարների վերականգնումը իրականացնել Պայմանագրի 2.4.7. կամ 8.1. կետերով սահմանված կարգով,

2.1.5. միակողմանի վաղաժամկետ լուծել կնքված Պայմանագիրը Ծրագրի առաջին փուլի մոնիթորինգի բացասական եզրակացության դեպքում, պայմանագրի 2.4.4. կետի պահանջները խախտելու դեպքում,

2.2. **Նախարարությունը** պարտավոր է՝

2.2.1. կատարել ծրագրի (առանձին փուլերի) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ,

2.2.2. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.2.3. իրականացված աշխատանքների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3. **Շահառուն** իրավունք ունի՝

2.3.1. Ծրագրին մասնակցել մեկ անգամ,

2.3.2. ստանալ Ծրագրի չափորոշիչներին համապատասխան անասնաշենքի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ծախսերի փոխհատուցում 3.1 կետին համապատասխան,

2.3.3. Շահառուն իրավունք ունի պահանջել վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը, եթե Նախարարությունը չի կատարել 3.3. կետով սահմանված պարտավորությունները:

2.4. **Շահառուն** պարտավոր է՝

2.4.1. կառուցել կամ վերակառուցել Ծրագրի չափորոշիչներին համապատասխան անասնաշենք: Կառուցումն իրականացվելու է բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանմամբ,

2.4.2. Պայմանագիրը կնքելու պահից՝ առավելագույնը մեկ տարվա ընթացքում անասնաշենքը հանձնել շահագործման,

2.4.3. անասնաշենքն առնվազն հինգ տարի օգտագործել նպատակային,

2.4.4. անասնաշենքը շահագործման հանձնելուց հետո 5 տարվա ընթացքում Նախարարություն ներկայացնել հաշվետվություն, որը պետք է պարունակի տեղեկատվություն անասնագլխաքանակի (ըստ սեռահասակային խմբերի), մթերատվության ցուցանիշների,

տարածքում այլ նախաձեռնությունների և առաջիկա ծրագրերի վերաբերյալ՝ տարեկան պարբերականությամբ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 25-ը,

2.4.5. Պայմանագրի 5.1. կետով սահմանված գույքը պայմանագրի գործողության ընթացքում չօտարել այլ անձանց,

2.4.6. Պայմանագրի 5.1. կետով սահմանված գույքի նկատմամբ պայմանագրի գործողության ընթացքում այլ գրանցում հայցել միայն նախարարության համաձայնությամբ,

2.4.7. Պայմանագրի դրույթները խախտելու դեպքում ծրագրի շրջանակներում տրամադրված փոխհատուցման գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե այդ մասին ծանուցումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում,

2.4.8. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.9. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.10. խստորեն պահպանել ծրագրի պայմանները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի գինը կազմում է 17,5 մլն (տասնյոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3.2. Ծառայության մատուցման գինը կայուն է և Շահառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Նախարարությունը նվազեցնելու այդ գինը:

3.3. ծախսերի փոխհատուցումը իրականացվում է երկու փուլով՝

1) կառուցապատման (վերակառուցման) աշխատանքներն ավարտելուց և առաջին փուլի մոնիթորինգի դրական եզրակացությունից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցել փոխհատուցման ենթակա գումարի 50%-ը,

2) փոխհատուցման ենթակա գումարի մնացած 50%-ը (2-րդ փուլի փոխհատուցումը) տրամադրել անասնաշենքը տեխնոլոգիական սարքերով ապահովելուց, շահագործման հանձնելուց և երկրորդ փուլի մոնիթորինգի դրական եզրակացությունից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.Նախարարությունը 3.1. կետով նշված փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է Շահառուի հաշվարկային հաշվին անկանխիկ եղանակով:

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

4.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շահառուին տրվում են գրավոր ցուցումներ և առաջարկություններ:

4.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շահառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Սույն պայմանագրով Շահառուն պարտավորվում է Ծրագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքում (անշարժ գույքի սեփականության (օգտագործման կամ վարձակալության) իրավունքի գրանցման վկայական N 24072018-05-0022) կառուցել և տեխնոլոգիապես ապահովել անկապ պահվածքով 42 (քառասուներկու) գլուխ կենդանու համար նախատեսված 14,6x36,0 քառակուսի մետր արտադրական տարածքով անասնաշենք, իսկ նախարարությունը պարտավորվում է փոխհատուցել շահառուի կողմից կատարված ծախսերը:

5.2. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

7.2. Շահառուն իրավունք ունի մինչև պետական աջակցություն ստանալը ցանկացած ժամանակ հրաժարվել դրանից: Այդ դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված:

8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

9.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից և վեց էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10.2. Սույն Պայմանագիրը գործում է 5 (հինգ) տարի ժամկետով, որը հիմք է պայմանագրի գործողության ընթացքում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն գույքի նկատմամբ օտարման սահմանափակում կիրառելու համար:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011033009
ՀՎՀՀ 02698604
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղար
ԱՐՄԵՆ ԽՆԱՉԱՏՐՅԱՆ

_____
(ստորագրություն) Կ. Տ.

ՇԱՀԱՌՈՒ

«ՍԱՆԻ ԼԵՆԴ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ,
Ծովագյուղ համայնք, 1 փող., շ. 13
տնօրեն ***Արման Նորիկի Մելոյան***
անձնագիր AN 0777593,
տրվ. 26.12.2013թ., 050-ի կողմից
Հեռ.+374 077 958 500
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220203335256000

_____
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
0026 ЕРЕВАН